№ 128 Հինգշաբթի Նոյեմբերի 13 **1886** Հինգշաբթի Նոյեմբերի 13 № 128

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի: Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ **1887** ԹՒԻՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլի է, վեց ամսվանը 6 րուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը:)

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ձեզանից է կախված.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ազգային կրթութիւնը Ֆրանսիայում. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՁԵԶԱՆԻՑ Է ԿԱԽՎԱԾ

Տարին վերջանում է, բոլոր լրագիրները բաց են անում ստորագրութիւնը:

„Մշակն" էլ դարձեալ մի տարի գոյութիւն ունեցաւ: Մտնում է այժմ նրա գոյութեան տասն և հինգերորդ տարին:

Եւ ահա շատերը սկսում են մեզ դիմել, թէ նամակներով և թէ բերանացի հարցմունքներով՝ արդեօք եկող տարվանից „Մըշակը" առաջվայ պէս ամենօրեայ կը դառնայ, թէ ոչ:

Այդ հարցմունքներին մենք միշտ մի և նոյն պատասխան ենք տալիս. „Մշակը" ա մ ե ն օ ր ե ա յ թերթ դառնալը կ ա խ վ ա ծ է ձեզանից, հասարակութիւնից: Եթէ շատ բաժանորդ կը տաք,—ամեն օր կը հրատարակենք մեր թերթը:

Հայի միամտութիւնը առասպելական է, կամ գուցէ հայը սիրում է իրան միամիտ ձևացնել:

Դիմել մի խմբագրին և հարցնել „առաջիկայ տարվանից ամե՞ն օր կը հրատարակէք ձեր թերթը", պէտք է ուրեմն ընդունել որ խմբագիրը ինքն այնքան հարուստ է, որ կարող է իր գրպանից ծածկել լրագրի ամբողջ ծախսերը, կամ պէտք է հաւատացած լինել որ կը կազմվի մի ընկերութիւն, որ նիւթապէս կը պահպանի թերթը, կամ, վերջապէս, պէտք է բաւական հիմք ունենալ ենթադրելու համար որ ինքն հայոց հասարակութիւնը այնքան բաժանորդներ կը տայ, որ կարելի կը լինի թերթը ամենօրեայ դարձնել....

Բայց քանի որ չը կայ ոչ առաջինը, ոչ երկրորդը, ոչ էլ երրորդը, քանի որ ոչ ինքն խմբագիրն է հարուստ, ոչ էլ լրագրին նիւթապէս օժանդակող ընկերութիւն կայ, ոչ էլ վերջապէս հայերից կարելի է բաժանորդների փոքր ի շատէ օրինաւոր թիւ սպասել,—ուրեմն ի՞նչ միտք ունեն այդ տեսակ ապարդիւն հարցմունքներ, ն ի ս ի ս ա համակրութիւն ցոյց տուող ֆրազներ.... „եկող տարի դիտաւորութիւն ունի՞ք ամենօրեայ դարձնել ձեր լրագիրը" կամ „յոյս կարելի՞ է ունենալ որ „Մշակը" ամենօրեայ կը լինի եկող տարվանից" և այլն....

Եւ այդ բոլոր հարցնողները իրանք էլ շատ լաւ են զգում թէ ապարդիւն հարցեր են առաջարկում խմբագրին, թէ մեծ մասամբ կեղծաւորութիւն են անում, երբ թէ համակրութիւն յայտնելով խմբագրին, շատ լաւ գիտեն թէ միայն այն ժամանակ կարելի կը լինի ամենօրեայ թերթ հրատարակել, առանց վտանգի մէջ ընկնելու՝ լրագրի համար պարտքեր անելու,—երբ ինքն ազգը այնքան բաժանորդներ կը տայ լրագրին, որ կապահովացնի ամենօրեայ լրագրի հաստատուն գոյութիւնը:

Այդ է պատճառը որ այդ տեսակ հարցեր առաջարկողին, լինի դա մի մ ի ա մ ի տ, կամ մի կ ե ղ ծ ա ւ ո ր հայ, մենք միշտ ստիպված ենք լինում մի և նոյն նախադասութեամբ պատասխանել, — այդ ձ ե զ ա ն ի ց է կ ա խ վ ա ծ:

Նոյնը կասենք մենք ամբողջ հայոց հասարակութեանը. կամենո՞ւմ էք որ „Մշակը" եկող տարվանից ամեն օր հրատարակվի....

—Այո.

Լաւ, դա ձեզանից է կախված, կրկնում ենք մենք և ամբողջ հայոց հասարակութեան երեսին. տուեցէք մեզ այնքան բաժանորդ, որ մենք ամեն օր հրատարակենք թերթը,—և մենք կը հրատարակենք ամեն օր:

Դա է միակ հնարը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 20-ին

Ամբողջ եօթն ամիս հեռացած լինելով Երևանից, մի քանի պատճառներով նորից եկայ Երևան, ուստի աւելորդ չեմ համարում հաղորդել այս ժամանակամիջոցում Երևանում եղած աչքի ընկնող փոփոխութիւնները: Անց ու դարձ անելով փողոցներով, առաջին անգամից մարդու ուրախացնում է լաւ լուսաւորութիւնը և լապտերների շատութիւնը, որոնք համարեա կիսով չափ աւելացրած են անցեալ տարվանից. զբօսարանի ճեմելիքներում ամեն մի 30—40 քայլի վրա սիւնաւոր լապտերներ են կանգնեցրած, այնպէս որ այժմ գիշերները զբօսարանում աւելի լոյս է լինում քան թէ անցեալ տարիները ճրագալոյցներին. շնորհակալութիւն այս կողմանէ քաղաքային վարչութեանը:

Քաղաքի մաքրութեան խնդիրը էլի հերթական հարց է: Քաղաքային վարչութիւնը Երևանի սատրկ փոշու առաջն առնելու համար, օրական եր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 30 հոկտեմբերի

Ամենէն զօրաւոր իրենց յենարանը կը համարեն «Մշակ»-ի հակառակորդք այն առարկութիւնը թէ՝ անպատեհ, անդէպ, անքաղաքագիտական է խօսել հրապարակաւ ազգային թերութեանց վրայ, վասն զի օտար ազգեր այնուհետև վատ գաղափար կունենան Հայոց մասին, և օտարներուն այսպիսի վատ գաղափար մը կազմելը կը վնասէ մեզ:

Որպէս զի այս առարկութիւնը արժէք ունենար, պէտք է նախ ապացուցանել թէ՝ օտարները Հայոց վրայ գաղափար մը ունենալու համար ուղղակի Հայոց կը դիմեն: Եթէ այդպէս լինէր, յանձըն կառնէինք ընել ամէն զգուշութիւն և հրատարակել այնպիսի թերթեր որք միայն գովաբանեն Հայոց առաքինութիւնները: Մեր վաճառականները կը հիմնէին թերթեր որ գովեն իրենց գործունէութիւնը և իրենց վստահութեան արժանի լինելը: Եւրոպացիք զանոնք կարդալով ալ կատարեալ վստահութիւն կունենային Հայոց, վարկ կը բանային և կը խրկէին մեզ անհագին փողեր:

Բայց պիտի պատասխանեն թէ՝ երբ մէկ մարդ մը ինքն իրեն լաւ ըսէ, դժուար կը հաւատան, իսկ երբ վատ ըսէ, կը հաւատան: Սակայն, ինչպէս անհատի մը, նոյնպէս և ժողովուրդի մը վրայ վատ գաղափար ունենալու համար միթէ կը սպասենք նորա խոստովանութեան: Մենք կը նմանինք, միշտ յիշուած կարապին, որ իւր գլուխը ձիւնի մէջ խոթելով չը տեսնէր որսորդը և կը կարծէ թէ որսորդն ալ զինքը չը տեսնէր:

Օտար ազգերն երբ պէտք ունին տեղեկութիւններ ստանալ կամ մեր անցեալին կամ մեր ներկայի մասին գիտեն թէ ինչ աղբիւրներու պէտք է դիմել: Հիւպատոսներն, ուղևորներն կարող են լիովի տեղեկութիւններ հաղորդել: Թրքա-Հայաստանի մէջ պտտուած անգլիական հիւպատոսներն առատօրէն գրած են մեր մասին:

Եթէ մենք առևտուրի մէջ պատուաւոր ենք. հիւպատոսներն կը փութան այդ մասին ապահովութիւններ տալ իրենց երկիրներուն: Յայտնի է որ հիւպատոսներու պարտականութեանց մէջ է նաև աշխատել որ իրենց երկրի վաճառականութիւնը կապուի այն երկրի վաճառականութեան հետ, ուր պաշտօն ունին իրենք: Այդ հիւպատոսները լաւ գիտեն թէ վարկը (քրէդիթ) ինչ նպաստաւորագոյն դեր կը կատարէ վաճառականութեան ծաղկման մէջ: Արդ եթէ Հայերն բարոյականութիւն ունին և արժանի են վարկ ստանալու, ապահով ըլլանք թէ առանց լրագիրներու նայելու հիւպատոսներն, ինչպէս նաև օտարազգիներ, այդ մասին նպաստաւոր տեղեկութիւններ կը հաղորդեն: Բայց եթէ վստահելի չենք, այն ատեն միջնորդը ո՛չ մէկ լրագիր չէ:

—

Մի քանի օրինակներով կուզեմ ցոյց տալ թէ մեր ազգային համբաւը որքան հարուածներ կրած է Եւրոպայի շատ մը տեղեր և թէ ազգային պարտականութիւն է մտածել այդ չարեաց դարմանը:

Մարսէլիոյ մէջ Հայերը շատ դժնդակ վիճակի մէջ են. ո՛չ մէկ մարսէլիացի վաճառական կրնայ կատարեալ վստահութիւն ունենալ Հայոց վրայ: Շատ դժուար է որ մարսէլիացի մը վարկ բանայ Հայոց. Հայ անունը երկիւղ կազդէ ամենուն: Ինչու: Վասն զի շատ տարիներ առաջ Մարսէլիայի վաճառականք վստահութիւն ունեցած են Հայոց վրայ, վարկ տուած են անոնց, իսկ Հայերն այդ վստահութիւնը գործածած են չարաչար, խաբեր են, կողոպտեր են Ֆրանսացիներին: Այդ օրէն ի վեր շատ տարի անցած է, բայց և այնպէս յիշատակը դեռ կենդանի կը մնայ, և թէպէտ այժմ մի քանի պատուաւոր տուներ փոքր ինչ փոխել կուտան այդ կարծիքն, սակայն այնքան հիմք ձգած է հայոց դէմ եղած ատելութիւնն որ այդ տուներն իսկ շատ խոչընդոտներու կը հանդիպին:

Մի քանի տարի առաջ Վանա կը գտնուէի. բարեկամ մը եկաւ մի օր խնդրեց ինձմէ որ թարգման լինիմ իրեն ֆրանսացի միջնորդի մը մօտ: Բարեկամս Պուլղարիոյ հայ մ'էր և ժողված էր ընկոյզի կոճղներ (լուք) զոր կուզէր Մարսէլիա խրկել ձեռօք ֆրանսացի միջնորդին: Պայմաններու վրայ խօսեցան. ֆրանսացին յայտնեց որ այդ կոճղներուն վրայ հայ անուն յայտնող «մարքա» պէտք չէ դրուի: Զարմանալով պատճառն հարցուցինք: Պատասխանեց թէ՝ Տրապիզոնի Հայերը ժամանակաւ շատ խաբած են Մարսէլիոյ վաճառականներն, խարդախութիւններ ընելով կոճղներուն վրայ, և հիմա երբ «ե ա ն»-ով կոճղ տեսնեն կը դժկամակին ընդունելու:

—Բայց, հարցուցինք, ինչ խարդախութիւն կրնայ լինել կոճղներու վրայ:

—Երբեմն կը պատահի, պատասխանեց, որ կոճղներն դեռ չը մեծցած քար կառնուն մէջերնին և շրջապատը մեծնալով քարը մէջը կը մնայ (այստեղ արուեստով քիչ մը բացատրութիւններ աւելաւ զոր մոռցած իսկ եմ): Արդ՝ Տրապիզոնի հայ վաճառականներն ուզած են օգուտ քաղել բնութեան այդ դաղմնիքէն. յաջողած՝ են ճարտար կերպով քար զետեղել կոճղներուն մէջ: Այդ խարդախութիւններն յետոյ երևան եկած են գործարաններու մէջ: Վաճառականներու վնասը մեծ եղած է և այդ օրէն ի վեր մեծ զգուշութիւն կընեն:

—Բայց այլ է Տրապիզոն, այլ է Վանա, ըսինք:

—Այո, բայց մեր մէջ արևելցիի անունը լաւ չը հնչեր, իսկ մանաւանդ հայ անունը:

Հարկ եղաւ մ ա ր ք ա ն պուլկարական անուամբ ընել:

1884-ին երբ Տփղիս կը գնայի, շոգենաւին մէջ հանդիպեցայ գերմանացի վաճառականներու որք Պաթում կերթային: Խօսեցանք արևելցի ժողովուրդներու մասին. յայտարարեցին թէ որչափ կարելի է դժուար կը կենան արևելքի ժողովրդոց հետ. մեծ գանգատներ յայտնեցին Յոյներու մասին, իսկ Հայոց դալով թէպէտ անմիջապէս չը խօսեցան շատ, բայց կերպով մը հասկցուցին ինձ թէ պարզապէս քաղաքավարութեան համար կը լինի: Ցխուր մտածութիւններ ունեցայ զոր գրեցի ամէնքն ալ «Արևելք»-ին:

—

Գանք ուրիշ գլխոյ մը:—Թող թէ ժամանակաւ անգղիացիք քիչ շատ լաւ կարծիք ունէին եղեր Հայոց մասին: Ղրիմի պատերազմէն վերջ Պօլիս հիմնուեցաւ Պանքա մը «Օսմանեան Կայսերական Պանքա» «Banque Impériale Ottomane» անուամբ, որոյ հիմնադիրք էին անգղիացիք, Ֆրանսիացիք և աւստրիացիք. այդ Պանքան հետզհետէ շատ մեծցուց իւր գործերն և այսօր Պօլսոյ դրամական ամենէն կարևոր հաստատութիւնն է:—Այդ պանքան իւր հիմնարկութեան առաջին օրէն սկսեալ հայեր գործածեց իւր դրամական գործողութեանց համար: Այդ հայերն «համալ» չէին, այլ գանձող և գանձապետ: Տասը տասն և հինգ տարիներու մէջ այնպէս եղաւ որ այլ եւ Պանքայի տնօրէններն որոց առաջինը Անգղիացի է, երկրորդը Ֆրանսացի, երրորդն Աւստրիացի, կատարեալ և կոյր վստահութիւն ունէին Հայոց վրայ: Բոլոր ոսկին և արծաթն Հայոց ձեռքն էր. կարծես թէ հայկական Պանքա մ'էր. բաղմաթիւ ընտանիքներ փայլեցան: Հայոց բարի անունն անուղղակի օգուտներ ունէր հայ վաճառականութեան և հայ անուան: Ամէն կողմ գոհունակութիւն կար: Նպաստաւոր տեղեկութիւնները կը հաղորդուէին Եւրոպա, և գիտենք թէ երբ եւրոպացիք, նամանաւանդ Անգղիացիք, անգամ մը որ լաւ կամ վատ գաղափար մը ստանան, դժուար կը մոռնան զայն:

Բայց անհ մի երեկոյ լուր տարածուեցաւ Գալաթիա թէ՝ Պանք օթօմանի հայ գանձապահներէն մին ոստիկանութեան յանձնուած է: Յաջորդ օրը տխուր լուրն ստուգութիւն եղաւ: Երկու երեք Հայեր ևս կը ձերբակալուէին և ոստիկանութեան կը յանձնուէին: Կը յայտնուի թէ Հայերը չարաչար գործածած են իրենց վրայ դրուած վստահութիւնը: Հայերը գողացեր են ՀԱՐԻՒՐ ՀԱԶԱՐ ոսկի (մօտ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՀԱԶԱՐ րուբլի): Դատ բացուեցաւ. յայտնուեցաւ թէ գանձապահներուն մէջէն շատերը մեղապարտ են. թէ դուրսէն մեղ-

կու անգամ ցնցիղասայլերով (ջուր շաղ տուող սայլեր) ջրել է տալիս Աստաֆեան փողոցի մի մասը, սկսած ս. Պողոս-Պետրոս եկեղեցուց մինչև նահանգապետի տան առաջը, մօտաւորապէս 200 սաժ. տեղ: Բարի նպատակ է այս. բայց ցաւելով պէտք է ասել, որ համարեա անօգուտ է անցնում, քանի որ նոյն փողոցից մօտաւորապէս 300 սաժ. տարածութիւն մնում է առանց ջրելու և երբ փչում է հիւսիս-արևելեան քամին, այնպիսի փոշու ամպ է մոցնում քաղաքի մէջ, որ էլ քաղաքը անտեսանելի է դառնում նայողի համար. սրա վրա աւելացրէք և միւս փողոցներինը, որոնք առաջինից ոչնչով յետ չեն մնայ. այլ բան էր, եթէ կարողանային գոնէ զլխաւոր փողոցները ջրել կամ բնակիչներին ջրել տալ: Պէտք է խոստովանել որ քաղաքացիքն էլ իրանց կողմից ամենևին չեն մտածում իրանց առողջութեան վրա: Ինչ անէ քաղաքային վարչութիւնը, երբ ամէն մի տանտէր դժուարանում է 5—10 սափոր ջրով զովացնել իր տան սահմանում գտնված փողոցի մասը, և այն էլ Երևանի պէս տեղում, որտեղ գրեթէ բոլոր բաղերով ու փողոցներով անաղին ջուր է վազում:

Ցանկալի է, նոյն իսկ կարևոր է, որ Քաղաքային վարչութիւնը աւելի խիստ ուշադրութիւն դարձնէր նաև մաքրութեան վրա, որի համար հարկաւոր է առանձին վերահայեցողութիւն, մանաւանդ այժմ երբ խօլերան իր սարսափը տարածել է ամենայն կողմ: Իմանալու համար թէ որքան մաքուր և առողջապահական հանգամանքների մէջն է գտնվում Երևան քաղաքը, բաւական է մի հայեացք ձգել Երևանի կենտրոնում բարձրագլուխ կանգնած արտաքնոցի վրա, որտեղ և որի շուրջը օրական 15—20,000 մարդու կեղտոտութիւններ են պարտակվում. իսկ դրա չորս կողմում հարիւրաւոր խանութներում հազարաւոր մարդիկ օրն ի բուն առևտուր են անում: Այդ ապականութիւններից 10 քայլ հեռու հէնց առաջին տեղը մրգավաճառներն են բռնում իրանց կրպակներով: Այս դեռ բաւական չէ. բաղաղխանայի յետևում ահագին տարածութեամբ աւերակ տեղեր կան, որոնք դարձեալ արտաքնոցների տեղ են բռնում. իսկ Հաջի-Բուդաղի տան դիմացի փողոցում աղալը դէզի նման է կանգնած, որտեղից անց ու դարձ անել անգամ չէ լինում: Այժմ կարծեմ հասկանալի է թէ ինչ դարշահոտութիւն կարող են մատակարարել օդին այդ բացօդեայ աղբանոցները: Այսքան անմաքրութիւնների առաջն առնելու համար քաղաքային վարչութիւնը միայն երկու մշակ ունի վարձած: Խորհուրդ կը տայինք Երևանի քաղաքային վարչութեանը, նախ՝ բոլորովին հեռացնել հրապարակից յիշեալ արտաքնոցը, երկրորդ՝ ստիպել խանութատէրերին որ նրանք իրանց խանութների համար իւրաքանչիւր չարսուի ծայրին հատաքական դումարով մի քանի կարգին արտաքնոցներ շինել տային (ինչպէս որ շինել է Թադէոսեանց աղղանունով պարոնը, եթէ չեմ սխալվում, իր խանութների համար) և երրորդ՝ պահանջել աւերակ հողերի տէրերից, որ նրանք իրանց հողերի վրա եթէ չեն կարող խանութներ շինել, գոնէ շրջապատեն պարիսպներով: Այսպիսով միայն, կարծում ենք, կարելի կը լինէր այդքան անմաքրութիւնների առաջն առնել:

Այստեղի ծխական դպրոցներից բացվել է միայն Գայեանեան օրիորդաց դպրոցը... Ցեսչի պաշտօնը յանձնած է Յովսէփ քահ. Մէլեանցին, որը մի և նոյն ժամանակ նախագահում է և հոգաբարձական ժողովներին: Հոգաբարձուքն են պ.պ. Ա. Ափրիկեանց, Ա. Տէր-Մարոքեանց, Մ. Աթանասեանց, Հ. Եղիազարեանց և Զ. Գէորգեանց: Հոգաբարձուք վարձել են երեք ուսուցիչ՝ Ս. Սարգսեանցին, Ց. Յովհաննիսեանցին և Ա. Ազարեանցին: Առաջինը այս տարի է աւարտել Երևանի ուսուցչական սեմինարիան: Երկրորդը դուրս է եկել Գէորգեան ճեմարանի 6-րդ դասատանից, երրորդը ճեմարանի 5-րդ դասատանիցն է և մի տարի գործակատարութիւն է արել: Բոլորն էլ 300-կան ռուբլիով: Ռուսաց լեզուի դասերը տրվեցան օր. Աղամալեանցին, իսկ Սարգսեանը հեռացվեցաւ ուսուցչութիւնից:

Հոգաբարձուներից պ.պ. Հ. Եղիազարեանց և Զ. Գէորգեանց հրաժարական են տուել: Վերջերումս ուսուցիչ Ազարեանցն էլ հեռացաւ դպրոցից:

Թեմական դպրանոցումն էլ փոփոխութիւններ են եղել: Նախկին տեսուչ պ. Ս. Բէգնազարեանցի փոխարէն նորընտիր հոգաբարձութիւնը հրաւիրել է նոր տեսուչ պ. Ա. Յովհաննիսեանցին: Հրաւիրված են և մի քանի նոր ուսուցիչներ. ինչպէս՝ Ա. Մելեանց 300 ռուբ. ռոճիկով, Ա. Գալստեանցն 250 ռուբ. ռոճիկով, Տէր-Գրիգոր քահ. Սոքիասեանց 150 ռուբ. ռոճիկով. ս. Սարգիս եկեղեցու տիրացու Թ. Տէր-Հայրապետեանց 150 ռ. ռոճիկով. հոգաբարձուները հարիւրական ռուբլի կը տրել են հին ուսուցիչների՝ պ.պ. Վ. Արովեանցի և Ս. Սմբատեանցի ռոճկից. 75 ռուբլի էլ Տէր-Մըկրտիչ քահ. Տէր-Մկրտչեանցից: Այդպիսով հայ ուսուցիչները ապահովվում են (?) նիւթականապէս....

Նորդումն էլ բացվել են երկսեռ դպրոցներ. ընտրված հոգաբարձուները մեծ մասամբ անարժան մարդիկ են: Ուսումնարանը դեռ ևս անկանոն դրութեան մէջն է և երկու սեռի 80—85 աշակերտներին առ այժմ կառավարում է տէր-Վահան քահ. Մամիկոնեանց:

Ցուրտը վնասել է բոլոր բոյսերին, մանաւանդ խաղողին, բամբակին և պահունի մրգերին: Ցաւալի տեսարան են ներկայացնում Երևանի այգիները. ման ես գալիս հարիւրաւոր այգիներ, մէկ տեղ մի կանաչ տերև չես տեսնում. կարծես թէ կրակ ձգած ու այրած լինեն բոլոր թփերը, իսկ ողկոյզները ցամաքած ու չորացած: Հաշւում են որ 100—150,000 ռուբ. վնաս այս ցուրտը միայն Երևանի այգիներին է տուել: Ոչոք յոյս չունի եկող տարի լաւ գինի ունենալու: Ցանկալի էր որ գինեգործութեան մէջ հմուտ մարդիկ իրանց իմացած միջոցներն ու դարմանները գինու պղտորելու կամ ընդհանրապէս չաղտոտ տուած (ցուրտը տարած) խաղողների դէմ հրատարակէին մեր պարբերական թերթերում: Այդպիսիները մեծ օգուտ տուած կը լինէին յուսահատված երևանցիներին և ընդհանրապէս Երևանի նահանգի բնակիչներին: Բամբակի արտերն էլ ցրտից սեսցել ու չորացել են առանց հասնելու: Բամբակի առևտուրը լաւ է:

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պետական գանձարանը այս տարի տուել էր նորից 110 հազար ռուբլի Թիֆլիսի քաղաքային թատրոնի շինութիւնը վերջացնելու և տանիքը ծածկելու համար: Բայի դրանից, դեռ հարկաւոր կը լինի էլի 232,345 ռուբլի թատրոնի ներսը զարդարելու համար: Պետական խորհուրդը անկարելի է գտնում որ այդ գումարն էլ տրվի պետական գանձարանից: Իշխան կառավարչապետը դիմել էր Թիֆլիսի դումային, թէ արդեօք նա չի առնի իր վրա այդ ծախսը: Քաղաքային վարչութիւնը հասկանալով թատրոնի բարձր նշանակութիւնը, բայց մի և նոյն ժամանակ աչքի առաջ ունենալով քաղաքային դրամարկղի ներկայ անհանգստալի դրութիւնը, խորհուրդ չէ տալիս օգտվել քաղաքի ընդհանուր միջոցներից, այլ նա առաջարկում է պարտք անել և ծածկել պարտքը այն 48 հազարով, որ կառավարութիւնը տալիս է տարեկան սուբսիդիա Թիֆլիսի թատրոնին: Իշխան կառավարչապետի այդ առաջարկութիւնը և վարչութեան ղեկուցումը քննվում էր դումայի նոյեմբերի 10-ի նիստում: Հարցը բարձրացրեց երկար և տաք վիճաբանութիւն. վիճաբանողների մեծ մասը՝ Եանգուլեան, Մ. Թամամշեան, Ա. Փրիդոնեան և միւսները ցոյց էին տալիս որ անպատրաստից չէ կարելի մի այդպիսի հարց վճռել, որը քաղաքի վրա 230 հազար պարտք է դնում. պէտք է մի մանաժողով կազմել որ ամենայն կողմից քննի խնդիրը, տեսնի թէ արդեօք այդ 230 հազարից աւել փող հարկաւոր չի դայ. թէ 48 հազարը կառավարութիւնը անպատճառ կը տայ և այլն: Վերջապէս, դուման գրեթէ միաձայն եկաւ այն եզրակացութեան, որ մանաժողովը հարկաւոր է: Մանաժողով կազմվեցաւ հետևեալ անձինքներից՝ պ.պ. Ա. Մատինեան, Ե. Փիլոյեանց, Պ. Ալիխանեան, Մ. Թամամշեան, Գ. Եանգուլեանց, Գ. Սունդուկեանց և Ա. Փրիդոնեանց: Մանաժողովը իր զեկուցումը պէտք է ներկայացնէ դումային երկու շաբաթվայ միջոցում:

—

Իշխան Ի. Մաչաբելին թարգմանել է անգլիերէնից վրաց լեզուով Շեկսպիրի «Համլէտը»: Թարգմանութիւնը տպվում էր «Թէատրի» անունով վրաց շաբաթաթերթում և շուտով լոյս կը տեսնի առանձին գրքով:

—

ԱՐԳԻՆԱՅԻՑ մեզ գրում են նոյեմբերի 20-ից հետևեալը: «Մեզանում կատարեալ ձմեռ է թագաւորում. այս տարի սովորականից վաղ սկսեց ձիւն գալ Շիրակում, և նոյն իսկ ծեր մարդիկ ասում են թէ տեսած չեն այդ տեսակ ձմեռ իրանց կեանքում, տեսած չեն որ հոկտեմբեր ամսին արդէն ձիւն գար ու գետերը սառուցով ծածկվէին:»

—

Շիրակի գաւառում, ինչպէս մեզ գրում են, այժմ կենսական պիտոյքների շատ մեծ առատութիւն և էժանութիւն է: Մի սօմար ցորէնը արժէ 9—10 ռուբլի, մի սոմար գարի (լաւը) 4 ռուբլի, կոտատի սօմարը 14 ռուբլի, մի հաւը արժէ 15 կոպէկ, 10 ձու 7 կոպէկ, միսը արժէ 5 կոպէկ ֆունտը, 100 կտոր աթար արժէ 75 կոպէկ:

սակիցներ ունէին:— Գուցէ եւրոպացի մեղսակիցներ ալ ունէին—և հաւանօրէն ունէին իսկ, բայց անոնք կրցան ինքզինքնին պարտկել:—Հայերը դատապարտուեցան բանտի:

Ինչ եղաւ հետևութիւնը: Պանքայէն հանեցին գրեթէ բոլոր հայերն որք վստահութիւն գրաւած էին. անոնց տեղ օտարազգիներ դրուեցան: Իսկ այն հայերն որ մնացին, վասն զի անոնց վրայ կարելի չեղաւ ոչ և է յանցանք գտնել, անոնք ալ ևս չը վայելեցին նախկին վստահութիւնը և հսկողութեան ներքև առնուեցան: Անգղիայէն մասնաւոր քննիչ եկաւ, ամէն ինչ քննեց տեսաւ: Այս մեծ գողութեան լուրը տարածուեցաւ ամէն ուրեք, կցուած Հայ անուան: Պանքային Եւրոպայի տնօրէններէն աղդու հրամաններ եկան, հայոց անոպատ: Եւ Եւրոպիոյ լրագիրները զրաղեցան այս խնդրով միշտ յեղյեղելով Հայ անունը: Վնասն ու անպատուութիւնը մեծ եղան մեր համբաւոյն:

—

Անցնենք ուրիշ դէպքի:—Ո՞վ չը յիշեր թէ Ոստանիկ Տէր-Մարգարեանց, մի Վանեցի պատանի իբր ուսանող Բարիզ գտնուելով, կարող եղաւ խաբել ֆրանսացիներն: Ինքզինքն իշխան կը կոչէր. խաբեց մինչև իսկ նախարարներն: Բայց որ աւելին է խաբեց վաճառականներ և դրամատէրներ. խարդախութեամբ առաւ մեծամեծ դումարներ և այն պահուն երբ յաջող ամուսնութիւն մը պիտի գոցէր այս ամէնը, գաղտնիքն յայտնի եղաւ: Դատը շատ արձագանք ունեցաւ. Ոստանիկ դատապարտուեցաւ և մնաւ բանտի մէջ: Բայց սակայն գողութեան, խարդախութեան գործի մը մէջ կը յեղյեղուէր միշտ Հայ անունը:

Այս և ուրիշ այսպիսի դժբաղդ դէպքերն այնպէս ըրին որ ամենակեղտոտ տիպերն իբր հայ կը հռչակեն:

—

Սակայն պիտի ըսուի թէ՝ մթթէ ուրիշ ազգերու մէջ չէն պատահեր այսպիսի դէպքեր: Այո, կը պատահին, բայց այդ ազգերու մէջ կան նաև առաքինութեան այնպիսի մեծ գործեր որով կը մոռցուին վատ գործերն:—Մեծ ազգերու չենք դիմեր. վեր առնենք մեզ դրացի, մեզ հայրենակից ժողովուրդ մը, Յոյներն: Գող, խարդախ նենգաւոր այնքան ունին յոյներն որ մենք անոնց համեմատութեամբ սուրբ սրբոց կը համարուինք: Ֆրանսայիք երբ խարդախ, գող, կեղտոտ անձ մը պիտի յիշեն կ՚ըսէք (grec) կըսեն, յոյն: Փառք Աստուծոյ մեր անունը այդպիսի անպատուաբեր բառ մը չը համարուեր:

Բայց արի տես որ Յոյներն ունին նաև մեծ առաքինութիւններ: Բուռն հայրենասիրութեան, ազգի համար ամէն ինչ կը զոհեն, վաճառականութեան մէջ մեծ տեղ գրաւած են պատուաւոր կերպով, Եւրոպիոյ մեծ կեդրոններու մէջ զօրաւոր տուներ ունին, Արևելքի վաճառականութիւնը իրենց ձեռքերուն մէջն է. նոր գրականութիւնին փայլ ունի. հին գրականութիւնն պարծանք է մարդկութեան: Քաջ են, արի են, ազգասէր են: Ամէն օր Եւրոպա առիթ ունի Յունաց լաւ գործերը տեսնելու: Ամէն օր Եւրոպա կը զարմանայ թէ՝ ինչպէս այդ պզտի ժողովուրդը ի սէր ազգի մեծամեծ զոհողութիւններ կընէ: Այսպէս է Յոյն հարուստը, այսպէս է Յոյն աղքատն: Երբ ազգային խնդիր մը կը լինի մինչև իսկ խեղճ յոյն աղախիններն իրենց ամբողջ ամսականները կը նուիրեն ազգին: Իսկ մենք Հայերս:—Միայն մեր վատ գործերը կը լսուին, իսկ մեր ազգային առաքինութեանց ապացոյցները չենք տար չուայլօրէն: Այս մասին շատ կծծի ենք, կամ թէ «ընդ գրուանաւ» կը պահենք:

Երբեմն մենք շատ կը զարմանայինք թէ՝ ինչու Վիկտոր Հիւգո աշխոյժիւ ու հոգով չը խօսիր Հայոց վրայ: Տաճկաստանի մէջ կայ ժողովուրդ մը որ Հայոցմէ աւելի Հիւկոյամոլ լինի: Յանուն Հիւկոյի կերդնուին հայ երիտասարդք: Ուսեալ թէ անուս ամէն հայ Վիկտոր Հիւգո կը կարդար, Հայաստանի գիւղերն իսկ տարածուած է Հիւկոյի գործերն: Անշուշտ, կըսէինք, Հիւգո դոհ պէտք է լինի որ ժողովուրդ մը նորա դաղափարներովը կը մեծնայ, ինքն որ խաղաղութեան, եղբայրութեան առաքեալն է, ինչու չը դրուատէր Հայերն որ այդ դաղափարներու աշակերտներն են: Հիւգո կը գոչէ Յունաստան, Կրետէ, Հերցէք, Պոսնիա: Սակայն ոչ Հերցէկովցիք, ոչ Պոսնիացիք և ոչ ալ Առնաուտները կարծեմ լսած են Հիւկոյի անունը:

Մի օր այս դիտողութիւնը կընէի Նար-Պէյ խորէն Սրբազանին որ նոր վերադարձած էր Բարիզէն և բաւական տեսակցութիւններ ունեցած էր Հիւկոյի հետ և արժանացած էր նորա սիրոյն ու համարման: Սրբազանն ըսաւ ինձ տխուր ժպիտով մը.

—Ես ալ այդ դիտողութիւնը ըրի Վիկտոր Հիւգոյին և բանաստեղծն նրբութեամբ պատասխանեց «Հայերն առիթ մը չեն ներկայացներ.»

Այս խօսքն է մտածելու խօսքը, ոչ մէկ օր կը լսուի Հայոց ազգային բարձր առաքինութիւն մը: Միայն մէկ միջոց մը Հայ անունը պատուաւոր կերպով սկսաւ ներկայանալ օտարին: Հայերն ազգային առաքինութիւն ցոյց կուտային և այդ ազգային առաքինութեան կենդանի ներկայացուցիչն էր Ներսէս Պատրիարքը: Եւ սակայն մենք տեսանք անխիղճ Հայեր, որ այդ մեծ հայը ցեխի մէջ ուղեցին խօթել. ամէն նախատինք տեղացին գլխուն: Չենք դիտեր ինչ գծուծ նպատակաւ, չարաչար հարուածեցին Ներսէսը: Այդ օրը դրա չէին մտածեր որ կային օտար ազգեր ոյք ղղուանօք պիտի նայէին այն ժողովուրդին վրայ որ կը նախատէ և կը թշնամանէ այն բարձր անձնուրութիւնը որ այնքան մեծ բարիքներ կը ջանար ընել իր ազգին: Ժողովուրդի մը համար ոչ ամօթ է ոչ վնասակար է քննադատել ինքզինքը, ճանչնալ իր թերութիւններն, նոյն իսկ եթէ զայնս չափազանցնէ. բայց ժողովուրդի մը համար ամօթ է, ժողովրդի մը համար նախատինք է հարուածել, բարոյապէս մահացնել իրեն բարիք ընող, իրեն օգտին համար զոհուել ուզող հովիւները: Ինչ զղջանք կը զգայինք երբ կը տեսնէինք թէ Ներսէսը ցեխի մէջ կը խօթեն: Արիւն կերթար ամէնուս սրտէն: Եւ այդպիսի անձինք կուզեն այժմ ցոյց տալ ինքզինքնին պաշտպան ազգային համբաւոյն: Բայց կարելի՞ է մթթէ որ ազգը մոռնայ այն անձինքն, այն թերթերն, որ մեր ամենուս սրտի բարախումներով բաբախեցին, որոց հետ միասին ազգը խնդաց ու արտասուեց:

ազգային դրամարկղի ներկայ անհանգստալի դրութիւնը, խորհուրդ չէ տալիս օգտվել քաղաքի ընդհանուր միջոցներից, այլ նա առաջարկում է պարտք անել և ծածկել պարտքը այն 48 հազարով, որ կառավարութիւնը տալիս է տարեկան սուբսիդիա Թիֆլիսի թատրոնին: Իշխան կառավարչապետի այդ առաջարկութիւնը և վարչութեան զեկուցումը քննվում էր դումայի նոյեմբերի 10-ի նիստում: Հարցը բարձրացրեց երկար և տաք վիճաբանութիւն. վիճաբանողների մեծ մասը՝ Եանգուլեան, Մ. Թամամշեան, Ա. Փրիդոնեան և միւսները ցոյց էին տալիս որ անպատրաստից չէ կարելի մի այդպիսի հարց վճռել, որը քաղաքի վրա 230 հազար պարտք է դնում. պէտք է մի մանաժողով կազմել որ ամենայն կողմից քննի խնդիրը, տեսնի թէ արդեօք այդ 230 հազարից աւել փող հարկաւոր չի դայ. թէ 48 հազարը կառավարութիւնը անպատճառ կը տայ և այլն: Վերջապէս, դուման գրեթէ միաձայն եկաւ այն եզրակացութեան, որ մանաժողովը հարկաւոր է: Մանաժողով կազմվեցաւ հետևեալ անձինքներից՝ պ.պ. Ա. Մատինեան, Ե. Փիլոյեանց, Պ. Ալիխանեան, Մ. Թամամշեան, Գ. Եանգուլեանց, Գ. Սունդուկեանց և Ա. Փրիդոնեանց: Մանաժողովը իր զեկուցումը պէտք է ներկայացնէ դումային երկու շաբաթվայ միջոցում:

—

Իշխան Ի. Մաչաբելին թարգմանել է անգլիերէնից վրաց լեզուով Շեկսպիրի «Համլէտը»: Թարգմանութիւնը տպվում էր «Թէատրի» անունով վրաց շաբաթաթերթում և շուտով լոյս կը տեսնի առանձին գրքով:

—

ԱՐԳԻՆԱՅԻՑ մեզ գրում են նոյեմբերի 20-ից հետևեալը: «Մեզանում կատարեալ ձմեռ է թագաւորում. այս տարի սովորականից վաղ սկսեց ձիւն գալ Շիրակում, և նոյն իսկ ծեր մարդիկ ասում են թէ տեսած չեն այդ տեսակ ձմեռ իրանց կեանքում, տեսած չեն որ հոկտեմբեր ամսին արդէն ձիւն գար ու գետերը սառուցով ծածկվէին:»

—

Շիրակի գաւառում, ինչպէս մեզ գրում են, այժմ կենսական պիտոյքների շատ մեծ առատութիւն և էժանութիւն է: Մի սօմար ցորէնը արժէ 9—10 ռուբլի, մի սոմար գարի (լաւը) 4 ռուբլի, կոտատի սօմարը 14 ռուբլի, մի հաւը արժէ 15 կոպէկ, 10 ձու 7 կոպէկ, միսը արժէ 5 կոպէկ ֆունտը, 100 կտոր աթար արժէ 75 կոպէկ:

Այս նամակս բաւական երկար եղաւ, բայց դեռ չաւարտեցի: «Արևելք» արտատպելով «Բարոյականութիւնից զուրկ ազգերն» յօդուածը ծանօթութեամբ մը, կըսէր թէ «համալները միշտ պատուաւոր եղած են»: Ինձ կը մնայ գրել յաջորդ նամակաւ համալներու վրայ, Պոլսոյ արուեստաւորներու, մանր վաճառականներու, սպասաւորներու, աղախիններու վրայ, պարզել անոնց վատ ու լաւ կողմերն:

Բայց ամէն բան ևս չեմ տեսներ. պէտք է յիշատակեմ որ թէ վաճառականութեան և թէ ուրիշ գործոց մէջ յոյժ պատուաւոր հայեր բաւական կան և հեռագնեմ աւելնալու վրայ են. այս երևոյթը շատ մխիթարական է և պէտք է քաջալերել:

Այս նամակիս նպատակը չէ խօսել ի նպաստ կամ ընդդէմ «Մշակի» յօդուածին: Ամէն գրող պարտաւոր է կարծեաց ազատութեան յարգող լինի: «Մշակի» այդ յօդուածը, ինչպէս ուրիշ յօդուածները, կարելի է քննադատութեան ենթարկել, ճիշտ կամ անճիշտ լինելը հաստատել, ոչ ոք կրնայ ըսել թէ «Մշակի» խմբագիրն անսխալ է: Իսկ ես ուզեցի մի քանի օրինակներով ցոյց տալ թէ՝ անտեղի է օտարները պատրուակ բռնել և ժողովուրդը գրդռել. թէ՝ օտարներն առանց այդ յօդուածին իսկ կրցած են տիսուր իրականութիւններով վատ գաղափարներ ունենալ մեզ համար: Մեզ անկ է մեր լաւ գործերն ալ, մեր ազգային առաքինութիւններն ալ ցոյց տալ, գործնական կերպով:

Ի վերջոյ առաջ կը բերեմ Ֆրանսայոց համար Ռընանի մէկ խօսքը որ ինքնին պերճախօս պաշտպանութիւն մը կրնայ համարուիլ «Մշակի» ուղղութեան: Ռընան կըսէ «Le trait le plus glorieux de la France est qu'elle sait mieux qu'aucune autre nation voir ses défauts et se critiquer elle-même»

(Ֆրանսայի ամենէն փառաւոր յատկանիշն այն է որ ուրիշ ոչ և է ազգէ աւելի լաւ գիտէ տեսնել իր պակասութիւնները և քննադատել ինքզինքն:)

Հայկակ

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են: «Ցակավին Շիրակ գաւառի ուսումնարաններից և ոչ մինը բացված չէ: Շատ գիւղեր սպասում են իրանց դպրոցները բանալու համար Կարսի վիճակաւոր առաջնորդի այցելութեանը:»

—

ԴԷՐԲԷՆՏԻՑ մեր թղթակիցը մեզ գրում է: «Մեր քաղաքի մի քանի երիտասարդներ և օրիորդներ ստորագրութեամբ հաւաքել են իրանց մէջ 20—26 ռուբլի փող, որով կամենում են դնել Ալիշանի «Սիսուան» հայերէն գիրքը յօգուտ տեղիս Ս. Մեսրովբեան ընթերցարանի:» Այդ լուրին մեր թղթակիցը աւելացնում է հետևեալ հարցումները. «Յարգելի խմբագիր, խնդրում ենք ձեզանից տեղեկացնել մեզ, թէ որտեղից կարելի է առնել և որքանով յիշեալ հեղինակութիւնը»: Մեր թղթակցի հարցումներին կարող ենք պատասխանել հետևեալը. Ալիշանի «Սիսուան» գիրքը կարելի է առնել Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում (Центр. книжн. торг.) և փողն էլ, կարծեմ 25 ռուբլի է, այդ գրավաճառանոցին պէտք է ուղարկել:

—

Մեզ գրում են ԴԷՐԲԷՆՏԻՑ հետևեալը, նոյեմբերի 1-ից: «Եղանակը աշնանային է մեզանում և շարունակ անձրևներն են գալիս: Բաղաւորապէս գիւղացիք վերջացրել են արդէն իրանց դաշտային գործերը: Բայց զարմանալի է որ հէնց մի երկու ժամ արև է անում, անմիջապէս ցեխը ցամքում է, պատճառ որ ամբողջ գետինը աւազոտ է: Մեզանում ծառերը դեռ ևս կանաչ են, խոտն էլ դեռ բաւական կանաչ է, իսկ մի քանի ծառեր, որոնցից տերևները արդէն թափվել են, նորից սկսում են կանաչել:»

—

Պարսկաստանի Արդաբիլ քաղաքից ստացած մեր մի մասնաւոր նամակից քաղում ենք հետևեալը: «Հոկտեմբեր ամսին տեղի ունեցան մեր հայոց դպրոցի համար չորս հոգաբարձուների ընտրութիւնները: Դժբաղդաբար ընտրվածներից երեքն էլ անարժան են այդ պաշտօնի և անընդունակ այդ պաշտօնը վարելու: Դպրոցը նիւթական կողմից էլ շատ աննախանձելի դրութեան մէջ է, մի և նոյն ժամանակ դպրոցի կարասիները և ամէն պարագաները անկարգ դրութեան մէջ են, նստարանները փչացած են: Թէև դպրոցը այժմ արդէն բացված է համարվում, բայց գրքերի և դասական պիտոյքների պակասութեան պատճառով դասատուութիւնը դեռ ևս սկսված չէ:»

—

Հոկտեմբերի 29-ից մեզ գրում են Պարսկաստանի Արդաբիլ քաղաքից, որ այդտեղ այժմ կատաղեալ ձմեռ է. անընդհատ տեղում են ձիւնախառն անձրևներ և օրեր են լինում, երբ նոյն իսկ պարզ ձիւն է գալիս, որ ծածկում է դաշտերը սպիտակ սաւանով:

—

Մեզ գրում են հետևեալը ՇՈՒԱՎԷՐ գիւղից: «Առհասարակ ընդունված է կարծել թէ մեր հայ գիւղացիք խիստ բարոյական սկզբունքների տէր մարդիկ են: Գոնէ կարող եմ ասել որ մեր Բօրչալու գաւառի հայաբնակ գիւղերի բնակիչները փչացած են բարոյապէս և փչանում են ֆիզիկապէս, մանաւանդ գաւառումս ընդունված նահապետական սովորութեան պատճառով բոլորովին փոքրիկ աղջիկներին կին առնել: Այդ պատը սովորական է ամբողջ գաւառում նոյնպէս և Շուլավերում: Ահա այս տարի ինչ է պատահում մեր գիւղում. մի 25 տարեկան երիտասարդ գիւղացի նշանվում է քանի մի տարի առաջ մի 45 տարեկան դեղեցիկ այրի կնոջ 8 տարեկան աղջկայ հետ: Բայց որովհետև երեխան դեռ պէտք է մեծանար մինչև ամուսնութիւնը, երիտասարդը, առ ժամանակ սկսում է ապրել իր այրի զոքանչի հետ և մի երեք տարվայ ընթացքում նրանից երեխաներ է ունենում: Այրին ճարահատված ստիպված է թողնել իր դիտաւորութիւնը երիտասարդին իր վաղահաս աղջկայ հետ պսակելու և ստիպվում է ինքն, արդէն 48 տարեկան կին լինելով, ամուսնանալ այդ 28 տարեկան երիտասարդի հետ: Իսկ անչափահաս աղջկանից, նոյն իսկ մանուկ օրիորդների հետ պսակվելը, որ մեզանում սովորական բան է, ամենամեծ անբարոյականութիւն է մեր կարծիքով, նոյն իսկ յանցանք է: Այդ երեխայ ամուսիններից հաղիւ տասից մէկն է ապրում, մանաւանդ երբ յղիանում են:»

—

«Кавказъ» լրագիրը լսել է, որ պ. Ց. Փիթոյեան թողեց Թիֆլիսի թատրոնի անտրպրենէօրի պաշտօնը այն պատճառով, որ ահագին ծախքերը և չնչին մուտքը միանգամայն անկարելի են դարձնում մասնաւոր մարդու համար այդ գործի շարունակութիւնը: Թատրօնական գործի շարունակութիւնը յանձն է առել Թատրօնական վարչութիւնը մինչև այս սեզօնի վերջը: Իսկ պ. Ց. Փիթոյեան կը վարի բեժիսէօրի պաշտօնը:

—

Երեքշաբթի, նոյեմբերի 11-ին, կէսօրից յետոյ ժամը 3-ին Թիֆլիսի դատաստանական պալատի քաղաքացիական դեպարտամենտը հետևեալ վճիռը տուեց Անտոն Ղօրղանեանի, Սոֆիա Տէր-Մկրտչեանի և Մինաս Տէր-Շմաւօնեանի մասին: Ա) Ճանաչելով Տէր-Շմաւօնեանին մեղաւոր կեղծ թղթեր չինելու մէջ, զրկել նրան առանձնակի, անձնական և կարողութեան իրաւունքներից և ենթարկել նրան մի տարուայ բանտարկութեան: Բ) Ճանաչելով Անտոն Ղօրղանեանին մեղաւոր կեղծ թղթեր չինելու մասնակցութեան այլ և զրգման մէջ, զրկել նրան բոլոր անձնական, առանձնակի և կարողութեան իրաւունքներից և աքսորել 15 տարով Յօմսկի նահանգը: Գ) Ճանաչելով Սոֆիա Տէր-Մկրտչեանին մեղաւոր կեղծ թղթեր չինելու մասնակցութեան և զրգման մէջ, զրկել նրան բոլոր անձնական, առանձնակի և կարողութեան իրաւունքներից և աքսորել 3 տարով Աստրախանի նահանգը: Դ) Առաջադրել Թիֆլիսի նահանգական դատարանին քննել Մարտիրոս Տէր-Մկրտչեանի քաղաքացիական պահանջը, նրա կրած վնասների վարձատրութեան իրաւունքը նրան վերադարձնելու համար: Ե) Այս գործի դատաստանական ծախքերը դնել մեղադրեալների վրա: Զ) Կեղծ թղթերը ոչնչացնել: Է) Ներկայ վճիռը, իրաւունքների և արտօնութիւնների վերաբերմամբ, արդարադատութեան մինիստրի միջոցով ներկայացնել Բարձրագոյն վերահայեցողութեան: Վճիռը յայտնելուց յետոյ, ներկայ եղող մեղադրեալները՝ Ղորղանեան և Տէր-Շմաւօնեան խնդրեցին իրանց տալ պատճէնները:

—

Այս ամառը մենք յիշեցինք «Մշակի» համարներից մէնում որ մեր հասարակութեան մէջ յայտնի Կարապետ վարժապետ Բէլախանց, յիսուն տարի վարժապետութիւն անելուց յետոյ, մնացած է այժմ ապրուստի ամէն միջոցներից զուրկ: Մենք մեր լրագրում հրաւիրեցինք հայոց հասարակութեանը օգնութիւն հասցնել 80 տարեկան բաղմաչխատ ծերունուն: Այդ հրաւէրից յետոյ ծերունու աշակերտներից մին, պ. Համասփիւր, ուղարկել էր նրան 50 ռուբլի միանուագ: Այժմ կարող ենք ուրախութեամբ յայտնել որ և Թիֆլիսի հայոց հասարակութեան ունևոր անձինքների մի խումբ նորերումս կազմել են իրանց մէջ մի «Արձանագրութիւն» որով վճռել են ամսէ ամիս 25 ռուբլի թոշակ տալ Բելախանց ծերունուն, մինչև նրա մահը: Այդ անձինքն են՝ Փիթոյեան և ընկ., Ծովեանեան եղբայրներ, Միրզոյեան Ն. և Ց. եղբայրներ, Կարապետ Մուրադեան, Զիթախեան և Էմինեան: Պարոններից առաջինը ամսական 10 ռուբլի է տալիս, միւսները՝ ոմանք 5, ոմանք 3, ոմանք էլ 2 ռուբլի: Այդպիսով գոյանում է ամսական 25 ռուբլի: Այդ տեսակ գործ պատիւ է բերում պարոններին: Բացի սրանից մենք լսեցինք որ «Հայոց Բարեգործական» ընկերութիւնն էլ վճռել է Բելախանց Կարապետ վարժապետին ամսական 5 ռուբլի թոշակ տալ: Այդպիսով ծերունին մինչև իր մահը ստանալու է ամսական 30 ռուբլի: Նոյեմբերի 6-ին ծերունին արդէն ստացել է և ստորագրվել է արձանագրութեան թղթի վրա իր առաջին ամսական թոշակի ստացման մասին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

—

Ֆրանսիական պատգամաւորների ժողովը, մի քանի օր սրանից առաջ, ձայների ահագին մեծամասնութեամբ ընդունեց ազգային սկզբունքական կրթութեան վերաբերեալ օրէնքը: Հանրապետական Ֆրանսիան ջերմ սիրով ձեռք է առել ժողովրդական կրթութեան նշանաւոր գործը, և ոչ մի դէպք բաց չէ թողնում այդ մեծ խնդիրը յաջողացնելու և դրականապէս վճռելու համար: Տարրական կրթութեան նոր օրէնքը իսկապէս 1882 թվի ժողովրդական կրթութեան օրէնքի շարունակութիւնը և լրացուցիչ մասն է: 1882 թվի նշանաւոր օրէնքը բաց արաւ մի նոր շաւիղ Ֆրանսիայի կրթական գործի համար, և մի վերջնական հարուած տուեց կաթոլիկ կղերի ուսումնարանական գործի վրա ունեցած ինքնակար ազդեցութեանը: 82 թվի օրէնքի զօրութեամբ իրաքանչիւր համայնք պէտք է ունենայ իր դպրոցը: Այդպիսի դպրոցներում դաստատութիւնը պէտք է տրուի աշխարհական անձանց ձեռքը. սրբազան պատմութեան դասատուութիւնը այլ ևս պարտադրացուցիչ չը դարձաւ: Այնքի առաջ ունենալով, որ տարիների ընթացքում, հոգևորականութիւնը մեծ ազդեցութիւն էր ձեռք բերել ուսումնարանների վրա, և դպրոցներում դասատուների նշանաւոր մասը հոգևորական անձինք էին, 1882 թվի օրէնքը կարգադրեց քիչ-քիչ, աստիճանաբար այդ հոգևորական դասատուներին փոխարինել աշխարհական ուսուցիչներով: Այդ պատճառով, օրէնքի այդ ներողամիտ ուղղութեան շնորհիւ, կղերը դեռ շարունակում է պինդ կանգնել մանաւանդ օրիորդական դպրոցներում, որտեղ կոյսերը առանձին հոգատարութեամբ կրթում են մի յայտնի մթնոլորտի մէջ աղջիկներին.... Ո՞ւմ չէ յայտնի, թէ Ֆրանսիան ինչ զրկանքներ և զոհողութիւններ կրեց կղերականութեան այդ զօրեղ տիրապետութեան շնորհիւ.... Նոր օրէնքը վճռեց վերջնական քայլ անել և որոշեց այսպէս. հինգ տարուայ ընթացքում արական դպրոցներում հոգևորական դասատուներին պէտք է անպատճառ փոխարինեն աշխարհական վարժապետներ: Ուրեմն հէնց դրանից հասկանալի է, թէ ինչու հոգևորականութիւնը միակամ ոտի կանգնեց այդ նոր օրէնքի դէմ մանաւանդ: Այդ կէտը նոր օրէնքի ամենանշանաւոր և ամենավճռական քայլը պէտք է համարել, և դրանով հանրապետութիւնը ուզում է վերջնականապէս իր հաշիւները տեսնել կաթոլիկ հոգևորականութեան հետ: Նոր օրէնքի մի նշանաւոր կէտն էլ այն է, որը վերաբերում է կանանց ուսուցչութեան իրաւունքներին: Մինչև 1882 թվի օրէնքի հրատարակվելը, աղջիկների սկզբնական կրթութիւնը գտնվում էր համարեա ամբողջապէս կոյսերի ձեռքում: 82 թվի օրէնքը առաջին անգամ բացեց կանանց առաջ ուսուցչուհիների ասպարէզը: Հանրապետական կառավարութիւնը իսկոյն հիմնեց մի քանի դպրոցներ, որտեղ պէտք է պատրաստվին վարժուհիներ ժողովրդական դպրոցների համար: Նոր օրէնքը չը բաւականացաւ այդքանով, և տուեց ուսուցչուհիների ձեռքը մի նոր, ազդու իրաւունք ևս, որի մասին մենք իր ժամանակին չտապեցինք հաղորդել մեր ընթերցողներին, այն է, որ վարժուհիները կարող են մասնակցել ուսումնարանական խորհուրդներին:

Աչքի առաջ ունենալով հոգևորականութեան գործունէութիւնը մասնաւոր դպրոցներում, նոր օրէնքը որոշեց, որ մասնաւոր դպրոցները, որտեղ կարող են դասատու լինել և հոգևորականներ, ենթարկվում են թէ ուսումնարանական շրջանի տեսուչների լիակատար վերահսկողութեանը, և թէ դեպարտամենտների խորհրդների կօնտրօլին:

Ահա այդպիսի աչքի ընկնող և վճռական բնաւորութիւն ունի հանրապետութեան կազմած կրթական նոր օրէնքը: Այդ օրէնքը միանգամայն ջլատում է հոգևորականութեան ոյժը, որը օրհասական կռիւներ էր տալիս իր ազդեցութիւնը պահպանելու համար:

Ֆրանսիան լաւ հասկացաւ, որ ժողովրդական կրթութեան գործը կղերի ձեռքում պահելը կը նշանակէ ներշնչել նրա մէջ միակողմանի և սխալ ուղղութիւն, կը նշանակէ կրօնական մթնոլորտի մէջ աճեցնել նոր սերունդը.... Զարմանալի չէ ուրեմն որ մի այդպիսի նշանաւոր խնդիր յուզմունք է առաջ բերում ոչ միայն պատգամաւորների ժողովում, այլ և մամուլի մէջ և հասարակական զանազան շրջանակներում: Հանրապետականները միաձայն նոր օրէնքի կողմն էին: Կղերական-միապետական կուսակցութեան ամենապերճախօս հռետորները իրանց բոլոր ոյժը թափեցին, իրանց բոլոր ուշադրութիւնը լարեցին,—բայց ոչինչ յաջողութիւն չունեցան. նոցա բոլոր առաջարկութիւնները և փոփոխութիւնները մերժվեցան ձայների ահագին առաւելութիւններով: Պառլամենտական և կղերական կուսակցութիւնները միացել են, որպէս զի կարողանան դիմադրել ազատամիտ հանրապետական կուսակցութեանը,—և ահա հէնց այդ պատճառով հանրապետական բոլոր զոյնի կուսակցութիւնները միացան ընդհանուր դրօշակի ներքոյ, և մի այժմ, մի այդպիսի մեծ խնդրի մէջ, թէ ընդունել տուեցին նոր, նշանաւոր օրէնքը, և թէ զօրեղ հարուած տուեցին հակառակ բանակին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական պատգամաւորների ժողովում, աշակողմեան կուսակցութեան անդամ Բաուլ Դիւվալ մի ճառ խօսեց, որը մեծ աղմուկ գցեց և որով ճառախօսը իսկապէս հրաւիրում էր խոնարհվել հանրապետութեան առաջ. «Հին կուսակցական թշնամութիւնները չէն անցել, ասաց Դիւվալ, այդ թշնամութիւնը նոյնքան խիստ է, որքան խիստ էր մայիսի 4-ի յաջորդ օրը: Սակայն ժամանակը շատ վտանգաւոր է, և պէտք է իրաքանչիւրը զոհողութիւն անի: Երկրի ներսը արդիւնաբերութիւնը ընկած է, առևտուրը քնած է, չարագործութիւնը աճում է... Արտաքին գործերը երկիւղալի և սպառնալի կերպարանք են առնում, ամէն տեղ խօսում են պատերազմի մասին... Անցեալի անունով ապրել չենք կարող. մենք կարող ենք միմիայն ֆրանսիական ռամկապետութեան դաշնակցութիւնը դէմը դուրս բերել. բայց ո՞ւր է այդ դաշնակցութիւնը...» Ճառը մեծ ծափահարութիւն ստացաւ ձախակողմեաններից, և նոյն իսկ Կլէմանսօ, Գօրլէ, Լոկրուա, Ֆրէյսինէ սեղմեցին հռետորի ձեռքը, որը իր ճառով այնքան աղմուկ գցեց աշակողմեանների մէջ:

—Պոլսից հաղորդում են, որ Սուլթանը հաւանութիւն տուեց դինուորական նոր օրէնսդրութեանը: Նոր օրէնքը գործադրութեան մէջ կը մտնի 1887 թվի մարտի 1-ից:

—Պրուսական կառավարութիւնը ձեռք է առել մի յայտնի միջոց, լեհացիներին գերմանացնելու համար: Լեհացի գինուորները պէտք է ծառայեն այն գնդերի մէջ, որոնք գտնվում են լեհական գաւառներից հեռու, և այդպիսով նոքա տարիներ այնտեղ մնալուց յետոյ, վերջումն էլ չեն վերադառնում իրանց երկիրը, և միշտ էլ հեռու են մնում իրանց շրջանի ազդեցութիւնից:

—Բուլգարական դահի խնդիրը շարունակում է կնճռոտ կերպարանք ունենալ: Իշխան Վալդեմարի հայրը պատասխանեց, որ իր որդին բուլգարական դահը ընդունել չէ կարող: Խնամակալութիւնը շարունակում է պնդել իր վճիռների և ուղղութեան վրա: Աստրօ-Ունգարիայի դիրքը աւելի ուռնորում է Բուլգարիային: Ռուսաստանի և Բուլգարիայի յարաբերութիւնը լարված է: Հեռագիրը մեզ լուր բերեց, որ Կաուլբարս և ռուսաց հիւպատոսները հեռացան Բուլգարիայից: Ռուսաստանը դրանով որոշ և վճռական քայլ արեց: Ընդհանուր դրութիւնը լարվելով լարվում է:

—Փարիզից հաղորդում են, որ Պոլ-Բերի մահը ծանր տպաւորութիւն թողեց, ինչպէս գիտնական, այնպէս էլ քաղաքական շրջաններում: Ներկայ թականի յունվարին ֆրանսիական կառավարութիւնը նրան նշանակեց Անամի և Տօնկինի ֆրանսիական ներկայացուցիչ: Պոլ-Բեր գնաց այնտեղ մարտի 27-ին: Դեռ սրանից մի քանի ամիս առաջ նրա կինը հեռագրով յայտնեց Փարիզ, որ իր ամուսինը հիւանդ է, բայց այդ բանը հրապարակ չէ դուրս բերվում:

—Նոյեմբերի 11-ին, երեկոյեան 7 ժամին, Տօնկինում մեռաւ ֆրանսիացի յայտնի գիտնական Պոլ-Բեր, որը եղել է նոյնպէս քաղաքական գործիչ: Պոլ Բեր ծնվեցաւ 1833 թվին, հոկտեմբերի 17-ին, Օկսերրում: Նա իր կրթութիւնը ստացաւ Փարիզում: 1863 թվին նա բնական գիտութիւնների դոկտորի աստիճան ունէր արդէն: Պոլ-Բեր ունէր և իրաւաբանութեան մագիստրոսի աստիճան: 1869 թվին նա նշանակվեցաւ Սորբօնում պրօֆէսօր, և իրան նուիրեց բնական գիտութիւնների, մանաւանդ ֆիզիօլոգիայի ուսումնասիրութեանը: 1874 թվին նա պատգամաւոր էր իր հայրենի դեպարտամենտի կողմից: Պատգամաւորների ժողովում նա հանրապետական կուսակցութեան անդամ էր, և մեծ եռանդով մասնակցեց ժողովրդական լուսաւորութեան գործի քննութեանը, և ջերմ կերպով պաշտպանում էր ուսումը պարտաւորեցուցիչ դարձնելու սկզբունքը: 1881 թվին, Գամբէտայի կաբինէտում, լուսաւորութեան մինիստրի պօրտֆէյլ ստացաւ: Ներկայ տարվայ յունվարին Պոլ-Բեր նշանակվեցաւ Տօնկինում Ֆրանսիայի ներկայացուցիչ-մինիստր, և ամսիս 11-ին զոհ դնաց Տօնկինի անպիտան կլիմային և խօլերային: Պոլ-Բեր հրատարակել է բնագիտական մի քանի գրուածներ: Նա աշխատակցում էր «République Française»-ի մէջ: Պոլ-Բեր մեռաւ 53 տարեկան հասակում: Նրա մարմինը կը տեղափոխվի Տօնկինից Ֆրանսիա:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական «Figaro» լրագիրը հետևեալ հանդէս է անում այժմեան Բոլգարիայի մասին։

Քաղաքական դէպքերի հետևանքն այն եղաւ, որ Բոլգարիայում վերահաստատվեցաւ զանակոծութիւնը։ Մի յանցապարտ, որ դատապարտված է խարազանի քսան և հինգ հարուածի, յանձնվում է երկու զինուորների, որոնք փոխ առ փոխ պէտք է զարնեն նրան, բարձրաձայն հաշվելով։ Բայց տասն և մէկերորդ հարուածի վրա կռիւ է ծագում երկու զինուորների մէջ։

—Տասն, հաշվում է մէկը։

—Տասն և երկու, պատասխանում է միւսը։

—Տասն, կրկնում է առաջինը.

—Ոչ, տասներկու....

—Ուրեմն, քանի որ հաշիւը կորցրել ենք, նորից սկսենք....

* * *

Լոնդոնի բարձր հասարակութեան մէջ վերջին ժամանակները սովորական են դարձել այնպիսի սիրահարութիւնները, որոնք հրապարակ են դուրս բերվում և դատաստանին ենթարկվում։ Լօրդ Կէմպբել մեղադրում է իր կնոջը նրանում, որ նա ունի չորս սիրահար, այն է դուքս Մայլբրո, գեներալ Բոտլեր, կապիտան Շաու և բժշկապետ Բիրդ։ Լոնդոնի ուշադրութիւնը լարված է դէպի այդ սիրահարական-դատաստանական քննութիւնը։

* * *

Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ մոադրութիւն կայ «Բաբելոնեան աշտարակ» շինելու 1889 թվի փարիզի աշխարհահանդէսի համար։ «Բաբելոնեան աշտարակը» յեղափոխութեան նշանակը պիտի լինի, և այդ պատճառով շատերը ցանկանում են, որ կառուցանվի այդ հսկայական աշտարակը, թէև նրա շինութիւնը միլիոններ է պահանջում։

* * *

Վարշավայի լրագիրները պատմում են, որ հինգ տարեկան երեխայի բարձրութիւն ունեցող մի թզուկ—կին, նոյեմբերս ծնեց մի չը տեսնված փոքրիկ երեխայ։ Թզուկ—կինը ինքը մեռաւ, երեխան կենդանի է, և ինչպէս պատմում են տեսնողները, մի մեծ մկան չափ է։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՕԴԷՍԱ, 10 նոյեմբերի։ Վարնայից այստեղ հասաւ «Память Меркурія» նաւը. նրան հետևում է «Забіяка» նաւը։ Այդ նաւերը ենթարկված են հինգ օրվայ կարանտինի։ Ասում են, որ այդ նաւերի վրա կան շատ ռուսահպատակներ, նոյնպէս և Վարնայի հիւպատոսը։

ԼՕՆԴՕՆ, 10 նոյեմբերի։ Ռուսաց դեսպան Ստալ չորեքշաբթի օր ուղևորվում է Գերմանիա, որտեղից նա կուղեկցի իր ընտանիքին դէպի Պետերբուրգ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 նոյեմբերի։ Երէկ երեկոյեան արտաստահմանից վերադարձաւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ իր ամուսնու և որդոց հետ։ Բժշկական ճեմարանի պրոֆէսոր Կոլոմնին երէկ անձնասպանութիւն գործեց։ Մի քանի օր դրանից առաջ նա մի կնոջ ենթարկեց օպէրացիային. թէև օպէրացիան կատարված էր լոլորովին կանոնաւոր կերպով, բայց կինը մեռաւ, և այդ հանգամանքը այնքան յուզեց Կոլոմնինին, որ նա վերջ տուեց իր կեանքին անձնասպանութեամբ։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 12 նոյեմբերի։ Մի քանի հրաժարեցրած բոլգարական սպաներ, որոնք մատնակցել են Իշխան Ալէքսանդրի գահընկեցութեան գործին, ներկայումս գտնվում են Ռումինիայում։ Ընդունում են, որ այդ սպաները զրկել են յայտնելու խնամակալութեանը, որ եթէ նա չուտով չը հեռանայ, իրանք առաջ կը բերեն ապստամբութիւն։ Ռուչչուկի և Վիդդինի ռուսաց հիւպատոսներ՝ Շատօխին և Կարցեվ հասան Բուխարեստ։ Երբ Շատօխինին տանող նաւը հեռանում էր Ռուչչուկից, տեղական պրեֆէկտ Մօնտով և Զաքարի Ստոյանով,—ընդդիմադրական կուսակցութեան առաջնորդը,—դիմեցին Շատօխինին մի ճառով, որի մէջ յայտնեցին, որ հիւպատոսների հեռանալը ապտիչ ներգործութիւն կունենայ Բոլգարիայի համար, որ Ռուսաստանի և Բոլգարիայի պառակտումը անկարելի բան է, և որ բոլոր սլավոնները, ինչպէս Բոլգարիայում, այնպէս էլ Մակեդոնիայում, կը տուժեն երկրի այդպիսի դրութիւնից. նոքա ասացին նոյնպէս և այն, որ բոլգարները պատրաստ են զոյութեան բոլոր պայմանները ընդունելու, որոնք կառաջարկվին Ռուսաստանի կողմից և ցանկանում են միայն, որ նոցա թողնվի սահմանադրութիւնը։

ԲՈՄԲԷՅ, 12 նոյեմբերի։ Գիլզաների ապստամբութիւնը սաստկանում է։ Գիլզաները յաղթեցին ազգանական էմիրի զորքին. զորքի մի մասը, թնդանօթաձիգների հետ միասին անցաւ գիլզաների կողմը։ Այդ ապստամբութիւնը ունի ժողովրդական բոլորքի բնաւորութիւն ընդդէմ անգլիացիների հետ կապած դաշնադրութեան. այդ ապստամբութիւնը զեկավարում են կլօնական ֆանատիկոսները։ Ապստամբութեան անմիջական պատճառը այն պատուաւոր ընդունելութիւնն է, որը ցոյց տրվեցաւ աւղանական սահմանագծի որոշող յանձնաժողովի անգլիացի անդամներին։ Այդ ընդունելութիւնը ժողովրդի մէջ կասկած յարուցեց, որ էմիրը կարող է համաձայնել անգլիացիների Աւղանիստանը գրաւելուն։

Կ. ՊՕԼԻՍ, 12 նոյեմբերի։ Գեներալ Կաուլբարս հասաւ այստեղ և դեսպան Նելիդովի ուղեկցութեամբ երէկ այցելեց մեծ վիզիրին և արտաքին գործերի մինիստրին։

ԺՈՒՐԺԵՎՕ, 12 նոյեմբերի։ Շատ պրեֆէկտների և պատգամաւորների արած հարցմունքին,—Ռուսաստանի հետ ունեցած պառակտման պատճառով ստեղծած դրութեան վերաբերութեամբ,—բոլգարական կառավարիչները պատասխանեցին կտրական կերպով, որ իրանք ընդդիմանում էին Ռուսաստանի պահանջներին մի քանի պետութիւնների խորհրդով։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐԱԼ

Նոյեմբերի 12-ին

Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ $22\frac{21}{32}$ պէնս.
— — Համբուրգի վրա — $193\frac{7}{8}$ պֆ.
— — Փարիզի վրա — 241 բ. սան.
Ոսկի — արժէ — — 8 › $63\frac{1}{2}$ կ.
Մաքսային կուպօնները — . . 167 › — ›
Արծաթ — — — . . . 1 › 35 ›
Բօրսային դիսկօնտներ — . . 3 և $6\frac{1}{2}$% ›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի 100 › 62 ›
— — — — 2-րդ — 99 › 87 ›
— — — — 3-րդ — 99 › 50 ›
— — — — 4-րդ — 99 › — ›
— — — — 5-րդ — 99 › 37 ›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ. 99 › — ›
— — 2-րդ — 99 › — ›
— — 3-րդ — 99 › — ›
Ներքին 5% առաջին փոխառութ. 239 › 25 ›
— երկրորդ — 221 › — ›
$5\frac{1}{2}$% բէնտա . . . . . 104 › 25 ›
Ոսկեայ բէնտա . . . . . 187 › 12 ›
Նոր կօնսօլիդած փոխառութիւն. . 158 › 50 ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. . . . . 163 › — ›
$5\frac{1}{2}$% գրաւական թղթեր խերսօնի կալուած. բանկի. . . . . 95 › — ›
6% գրաւակ. թղ. խարկովի կալ. բան. 101 › 25 ›
— — Պոլտավայի — — 100 › 50 ›
— — Պետ.Տօլսկ. — — 100 › 62 ›
— — Կիեվի — — 100 › 75 ›
— — Մոսկվայի — — 102 › — ›
— — Բեսարաբ. Տավր. — 100 › — ›
— — Նիժ. Սամար. — 100 › 50 ›
— — Վիլնայի — 100 › 25 ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ. — › — ›
— —Ռոմթայիսի-18 և 43 տ. — › — ›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները 561 › — ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 263 › 25 ›
Ռիբինսկ-Վոլոգդի ընկ. . . . . 96 › 75 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ. . . . . 93 › 37 ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ . 94 › — ›
Օդէսայի — — . 93 › 75 ›
Նոր երկաթուղային բէնտա . . . — › — ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. . — › — ›
Պետական բանկի 6-դ հրատարակութեան տոմսերը . . . . . — › — ›
Գրաւ. թղ. Ազնւ. կալ. բանկի . . 98 › 75 ›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Ռաֆայէլ Պատկանեանին. Մեզ հասցրին 268 բուբլի, որպէս զի ձեզ ուղարկենք։ Այսօր փոստով ուղարկեցինք ձեզ այդ գումարը։

ՇՈՒՇԻ. Լ. Ձեր մեծ յօդուածը յանձնեցինք ձեր նամակին համաձայն «Աղբիւրի» խմբագրին։

ՄԵԾ-ՂԱՐԱԲԼԻՍԱ. Ա. Տ. Ս. Շնորհակալութեամբ ստացանք ապառիկը։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ընդհանուր գիտութեանը, որ նոյեմբերի 16-ին ներկայ 1886 թվին, Դումայի դահլիճում, առաւօտեան 9 ժամին, կը կատարվին երկրորդ կարգի ՁԱՑՆԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, առաջիկայ 1887—1890 քառամեակի համար։

3—3

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ որ ունի Ներսիսեան դպրանոցի վկայագիր, ԿԱՄԵՆՈՒՄ է թուսաբանութեան, ընդհանուր Աշխարհագրութեան, Հայոց պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան ԴԱՍԱՏՈՒԻ ՊԱՇՏՕՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ „Մշակի" խմբագրատանը։

1—3

Պատկերազարդ ԴԱՍԱԳԻՐՔ-ԻՆՔՆԱՈՒՍՈՒՑԻՉ **ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ** Լ. Խան Աղեանցի. գրավաճառների մօտ 20 կոպէկ։

18—24 (Հ.)

ԽԱՐԿՕՎ ՐԻԲՆԱՅԱ ՓՈՂՈՑՈՒՄ ՐՈՒՖՓԻ ՕՏԵԼՈՒՄ ՆՕՄԷՐՆԵՐ ԵՒ ՐԵՍՏՕՐԱՆԸ

ՆՈՐԻՑ ՇՔԵՂ ԿԵՐՊՈՎ ՁԱՐԴԱՐՎԱԾ ԵՆ։

Նօմէրները 75 կոպ.—5 բուբլի։ Ամենայն յարմարութիւն։ Խոհանոցը Մոսկվայի Էրմիտաժ Բեստօրանի հմուտ խոհարարի ձեռքումն է։ Բեստօրանում կայ Օրքէստրիոն-Մօնստր։

Տասն օրից աւելի մնացողներին անում են զիջումն (բացի ուտելաճառների մէջ-ցին)։ Նօմէրների գները շատ մատչելի են։

Kharkow. Hôtel Rouff.

5—10

ՀԱՇՎԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ

ց1-ն Նոյեմբերի 1886

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բագուայ բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ).....	48,936—79	13,334—08	62,270—87
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	70,022—69	230,000 —	300,022—69
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.....	1,571,156—86	470,445—37	2,041,602—23
4. Զեղչումն տոկոսաբեր թղթերի, կտրօնների և այլն.....	27,509—15	2,576—30	30,085—45
5. Փոխատվութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,189,742—78	51,553 —	1,241,295—78
բ) › ոչ ապահ. › ›	143,556 —	160 —	143,716 —
գ) ապրանքների	10,406 —	93,804 —	104,210 —
դ) ոսկւոյ և արծաթի.....	— —	4,300 —	4,300 —
6. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	335,501—29	10,815 04	346,316—33
7. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր..	16,879—91	— —	16,879—91
8. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւ (Loro).....	3,912,056—40	— —	3,912,056—40
բ) Բանկայի հաշիւ (Nostro).....	3,797,160—76	— —	3,797,160—76
9. Բաժնի հաշիւը կենտրօն. վարչութեան հետ.	527,661—34	— —	527,661—34
Կենտրօնական վարչութեան հաշիւը բաժնի հետ.....	— —	83,469—46	83,469—46
10. Բողոքուած մուրհակներ *).....	450,629—42	— —	450,629—42
11. Պայմանաժամը անցուցուած փոխատվութիւններ.....	12,660 —	— —	12,660 —
12. Ընթացիկ ծախսեր.....	33,871—10	9,520—11	43,391—21
13. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.....	4,074—98	3,919—74	7,994—72
14. Յետ ստացուելիք ծախսեր.....	16,004—31	602—44	16,606—75
Ր. Ա.	12,167,829—78	974,499—54	13,142,329—32

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բագուայ բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ.....	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ.....	145,031—46	— —	145,031—46
3. Արդիւնք 1885 թ. ի պահեստ...	131,233—08	— —	131,233—08
4. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	1,568,692 —	27,140 —	1,595,832 —
բ) ց'Պահանջ.....	305,234 —	13,450 —	318,684 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	984,167—81	229,375—06	1,213,542—87
› › պայմանաւոր....	— —	140,846—08	140,846—08
5. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro).....	3,709,875—22	— —	3,709,875—22
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	3,996,103—42	— —	3,996,103—42
6. Բաժնի հաշիւը կենտրօնական վարչութեան հետ.....	— —	523,570—18	523,570—18
Կենտրօնական վարչութեան հաշիւը բաժնի հետ	91,365—95	— —	91,365—95
7. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը 1882, 1883 և 1884 թ.	575—60	— —	575—60
8. Չը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց.....	72,386—99	5,894—51	78,281—50
9. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	122,525—96	30,009—01	152,534—97
10. Փոխանցիկ գումարներ.....	40,638—29	4,214—70	44,852—99
Ր. Ա.	12,167,829—78	974,499—54	13,142,329—32

*) Բողոքուած մուրհակներից վնասները, որոնք կարող են տեղի ունենալ, ծածկելու համար յատկացրած է առանձին գումար..... 131,233—08

Дозволено цензурою, Тифлисъ 12 Ноября 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.